ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյանի 2019 թվականի գործունեության տարեկան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գ. Ալաշկերտ 06.02. 2020թ.

ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին >>, <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

1. **Գործավարություն .**

2019 թվականի ընթացքում համայնքի բնակչությունից ստացվել է 76 դիմում և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրվել է բազմաթիվ տեղեկանքներ և բնութագրեր:

2. **Ավագանու գործունեություն.**

2019թվականին համայնքի ավագանին գումարել է 12 ավագանու նիստ որից 6-ը հերթական, իսկ 6 –ը արտահերթ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման համար: Հաստատվել է համայնքի 2020 թվականի բյուջեն, մատուցված ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Սահմանվել է 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

3.Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ.

Համայնքի ղեկավարը իր գործունեությամբ աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը , ինչպես նաև գյուղմթերքների մշակմանն և իրացմանը : Հետևողական աշխատանքներ է տարվել ոռոգման ջրի մատակարարման ուղղությամբ: Հայաստանի տարածքային զարգացման հիմանադրամի հետ համաֆինանսավորմամբ կազմվել է ծրագիր նախկին թռչնանոցի մոտի խորքային հորը ամբողջությամբ վերանորոգելու համար :

Իր անմիջական հսկողությամբ համայքնում պայմանագիր է կնքվել անասնաբույժի հետ , որը իրականացնում է անասնաբուժական ծառայություններ : Կատարվում են բոլոր հակահամաճարակային միջոցառումները:

4.Հողաշինության և հողօգտագործման բնագավառ.
Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման վրա :

5.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ.
Իր իրավասության շրջանակներում վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործնեության նկատմամբ , կատարվել են հողամասերի չափագրման և ճշտման աշխատանքներ , տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր :Պարբերաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ : Անխափան կերպով բնակչությանը մատակարարվում է խմելու ջուր օրական 4-6 ժամ անվճար:
Պարբերեբար կատարվում են աղբահանման աշխատանքներ շաբաթ և կիրակի օրերին :Համայնքի կենտրոնական և որոշ փողոցներում անցկացվել է գիշերային լուսավորության համակարգ:

6. Հողի հարկ և գույքահարկ.
2019 թվականի ընթացքում համայնքի բյուջե է մուտքագրվել հողի հարկ 6 477 899 ՀՀ դրամ , շինության հարկ 185 749 ՀՀ դրամ, ավտոմեքենաների գույքահարկ 7 697 740 ՀՀ դրամ:

7. Կրթություն և գիտություն.
Համայնքում գործում է մեկ դպրոց 200 աշակերտով : Համայնքում գործում է մեկ երաժշտական դպրոց ,որը ունի 42 սան : Համայնքի մանկապարտեզը հիմնովին կառուցվելուց հետո հունիս ամսից աշխատում է , հաճախում են 90 երեխաներ և ստեղծվել է նոր 18 աշխատատեղ :

8. Մշակույթ
Համայնքն ունի մեկ մշակույթի տուն ,որը չի գործում գտնվում է վթարային վիճակում,գործում է մեկ գրադարան ,որը ունի մեկ աշխատող և հարուստ գրադարան է :

9.Զինակոչ

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է զինակոչը և կցագրման աշխատանքները:

10.Սոցիալական ծառայություն

Բնակչության անապահով խավերին, հաշմանդամներին տրվել է տարբեր չափի ֆինանսական օգնություններ:

Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան նաև չլուծված

հիմնախնդիրներ, որոնք բարձրացվեցին համայնքի բնակչության կողմից:

1. Կենտրոնական ճանապարհները անմխիթար վիճակում են , ունեն ասֆալտապատման խիստ կարիք, քանի որ անձրևներից հետո նորից վերանորոգման խնդիր է առաջանում :

2. Համայնքում չի գործում կուլտուրայի տունը , որը գտնվում է վթարային վիճակում:

3. Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2019 թվականի երկրորդ կիսամյակի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գ. Ալաշկերտ

Ալաշկերտ համայնքը ունենալով խաղողագործության և պտղաբուծության ուղղվածություն այս տարվա երկրորդ կիսամյակը բարենպաստ էր գյուղատնտեսության համար: Սպասվել է առատ բերք : 2019 թվականի երկրորդ կիսամյակում հավաքագրվել է հողի հարկ 5 137 397 դրամ և գույքահարկ 5 337 549դրամ :
Կատարվել են բազմաթիվ աշխատանքներ.

1. Կենտրոնական ճանապարհները խիստ վերանորոգման կարիք ունեին, կենտրոնական փողոցներում կատարվել են ավազապատման և հարթեցման աշխատանքներ :

2. Խմելու ջրի խողովակաշարը կառուցվել է 50-60-ական թվականներին, որը ունի վերանորոգման խիստ կարիք : Համայնքում հատված-հատված կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Բնակչությանը անվճար և անխափան տրվում է խմելու ջուր՝ օրական 4-6 ժամ տևողությամբ, ինչպես նաև համայնքի ծայրամասային հատվածներում որտեղ հնարավոր չի ինքնահոս եղանակով ապահովել ոռոգման ջրով համայնքապետարանը աջակցում է այդ ընտանիքներին ոռոգման ջրով ապահովելու հարցում:

3. Համայնքում պարբերաբար կատարվում է անվճար աղբաթափման աշխատանքներ /շաբաթը երկու անգամ/ : Գյուղի սանիտարական վիճակը գտնվում է բարվոք վիճակում:

4. Անցկացվել է 6 ավագանու նիստ, որոնք պատշաճ ժամկետներում ուղղարկվել են մարզպետարան, իսկ համայնքի 2020 թվականի բյուջեի և տեղական տուրքերի նախագծերը ուղղարկ վել է ՀՀ Արդարադատության նախարարություն փորձագիտական քննության

5. Բնակիչներին տրվել են բազմաթիվ տեղեկանքներ և տարբեր բնույթի փաստաթղթերի պատճեններ:

6. Ժամանակին և պատշաճ կերպով զինվորական կոմիսարիատի հետ անցկացրել ենք զինակոչիկների կցագրման աշխատանքներ:

7. Վիճվարչություն է ներկայացվել նաև տարբեր բնույթի հաշվետվություններ, իսկ Ֆինբաժին՝ տարբեր բնույթի ֆինանսական հաշվետվություններ:

8. Բնակչության անապահով խավերին տրվել է տարբեր չափի ֆինանսական օգնություններ:

9. Պայմանագիր ունենք միջազգային կազմակերպության հետ և համայնքի անապահով և նպաստառու ընտանիքներին տրամադրվում են օգնություններ սննդի և հագուստի տեսքով և շարունակական են :

10. 2019 թվականի հունիսի 1-ից մանկապարտեզը բացվել է և հաճախում են 90-ից ավելի երեխաներ , ստեղծվել է 18 նոր աշխատատեղ: Տեղադրված է նոր խաղահրապարակներ և նստարաններ :

Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան նաև չլուծված

հիմնախնդիրներ, որոնք բարձրացվեցին համայնքի բնակչության կողմից:

1. Համայնքում չի գործում կուլտուրայի տունը , որը գտնվում է վթարային վիճակում:

2. Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:

3. Կենտրոնական ճանապարհները անմխիթար վիճակում են , ունեն ասֆալտապատման խիստ կարիք, քանի որ անձրևներից հետո նորից վերանորոգման խնդիր է առաջանում :

4. Նախկին թոչնանոցի միջի ոռոգման համար խորքային հորի վերանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են :

Համայնքի ղեկավարի 2019 թվականի երկրորդ կիսամյակի հաշվետվությանը մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ՝ Մ. Սարիբեկյանը:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան